ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» հունիսի 2014թ. N_____Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի հ.5/2 հասցեի պոմպակայանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 24.10.2013թ. հ. 24102013-01-0219 վկայական) մինչև 2016 թվականի մայիսի 31-ը, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության, «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Օ-Քոմփանի Ժենեռալ դեզ Օ» ընկերության միջև 2005 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան շահագործելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Թբիլիսյան խճուղի, 5/2 հասցեում գտնվող պոմպակայանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության, «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Օ-Քոմփանի Ժենեղալ դեզ Օ» ընկերության միջև 2005 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան շահագործելու նպատակով:

«Վարձակալության պայմանագիրը» մեկնարկել է 2006թ. հունիսի 1-ից: Հետագայում, «Վարձակալության պայմանագրի» գործողության 4-րդ տարում՝ ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 10-ի N1042-Ն որոշմամբ՝ «Վարձակալության պայմանագրով» նախատեսված ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն փոխարինվեց Երևանի քաղաքապետով:

Համաձայն «Վարձակալության պայմանագրի»՝ «Ժամկետի ընթացքում իրականացված կապիտալ աշխատանքների ավարտից հետո դրանց սեփականատիրոջ՝ Վարձատուի կողմից դրանք պետք է օգտագործման հանձնվեն Վարձակալին»՝ «Երևան Ջուր» ՓԲԸ-ին:

Այսպիսով, «Երևան Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի Թբիլիսյան խճուղի հ.3 և հ.5 շենքերի ջրամատակարարումն ապահովող՝ Թբիլիսյան խճուղի, 5/2 հասցեում կառուցված պոմպակայանի մասնագիտական շահագործումն ապահովելու, նշված շենքի ջրամատակարարման ծառայությունները սահմանված որակի պահանջներին համապատասխան իրականացնելու համար՝ նպատակահարմար է Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող՝ Թբիլիսյան խճուղի, 5/2 հասցեում գտնվող պոմպակայանն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Երևան Ջուր» ՓԲԸ-ին:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 44-րդ կետի՝ 2014 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի ցանկում ընդգրկված է համարվում 2010-2013 թվականների ծրագրերում չընդգրկված և մինչև սույն ծրագրի ընդունվելը և (կամ) ծրագրի գործողության ընթացքում Երևան համայնքի անվամբ գրանցված գույքը, այդ թվում՝ Երևան համայնքի սեփականությանն անցած անժառանգ գույքը, դրա բաժինը:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջացել կայացնելու համապատասխան ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ առաջանում է Երևան քաղաքի ավագանու որոշման կատարումն ապահովելու մասին Երևանի քաղաքապետի որոշում ընդունելու անհրաժեշտություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ